

’ի փոխ¹⁶³: Բայց Անտիոքեայցն ոչ եւս հանդուրժեալ զգուանաց նորին եւ տառապանաց սովոյն եւ արգելանաց, զի ոչ էր բարձեալ Լեւոնի զպաշարումն քաղաքին, աղերսաւորս առաքեցին առ նա՝ զալ եւ զօրինաւոր տէր իւրեանց՝ զմանուկն Ռուբէն՝ հաստատել յաթոռ իշխանութեանն: Աստանօր ա՛յլ իմն փաստ հաւանական ընծայէ մեզ պատմիչս մեր արքունի, թէ եւ անհամաձայն այլոց, այլ թերեւս նշոյլ նոր ծագեցէ պատմութեանս Անտիոքայ. զի յայսմ (1206) ամի ասէ վախճանեալ զծեր Բրինձն Պեմունդ Գ, զոր արեւմտեայ պատմիչք հասարակօրէն եւ հաւանօրէն համարին յամին 1201, ըստ որում եւ մեք նշանակեցաք ’ի վեր անդր. եւ այսպէս յարմարեալ յերհարէ մերս՝ զկարգ պատմութեանն, որոյ հետեւորդն համաձայնի արեւմտեայց. «Ի թուին ՈՄԵ մեռաւ Բրինձն Անտիոքայ Պեմունտն, եւ նստաւ ’ի տեղ նորա որդին իւր՝ որ էր միականի, եւ էր կոմս Տրիպօլսոյ. եւ առաքեաց առ նա թագաւորն Լեւոն եւ եցոյց զգիր պայմանի հօրն իւրոյ, զոր արարեալ էր թագաւորին, վասն ժառանգութեան տղայի աւագ որդւոյն իւրոյ, զոր գրեցաք. եւ նա ոչ առ յանձն ընդունել զգիր պայմանին, եւ ոչ կամեցաւ կալ յիրաւունս. եւ դարձեալ առաքեաց թագաւորն, եւ եցոյց պատրիարզին Անտիոքայ զնոյն գիր եւ զիրաւունս իւր. եւ պատրիարզն վկայեաց իրաւանց թագաւորին. այլ կոմսն ոչ առ յանձն»: Յետ այսորիկ յիշէ զթշնամութիւն նորա ընդ պատրիարքին եւ զբանադրանսն առ ’ի նմանէ, զբանտելն զնա, եւ զհակառակութիւն Լեւոնի, այլ ոչ զմուտս սորա, որում վկայեն արտաքինքն եւ թուղթք իւր իսկ թագաւորին¹⁶⁴:— Արդ եկն սա բազմութեամբ զօրաց, բայց անվնասս եւ անարգել եմուտ ’ի քաղաքն (1206). ընդ առաջ ելին նմա ոչ միայն եկեղեցականքն՝ այլ եւ յոլովք ’ի պարոնայց եւ յասպետաց, եւ մեծաւ շքով մուծին ’ի մայր եկեղեցին՝ ’ի Ս. Պետրոս. ուր երդուաւ Ռուբէն պատրիարքին՝ զօրինական մեծարանսն, եւ ընկալաւ ’ի նմանէ զԴրօշն կամ զՆշանն տիրական. եւ Պարոնայքն երդուան նմա ’ի սուրբ աւետարանն, հաւատարիմ հպատակութիւն եւ պաշտպանութիւն յամենայն ժամանակի.

¹⁶³ Ոմանք յառաջնում նուագի պաշարմանն Անտիոքայ՝ ասեն զայսուսիկ ընկալեալ կոմսին, եւ նոքօք վանեալ զԼեւոն. այլ ոչ գիտեմ զիա ըդ սպերախտք գտանէին սմա Գենուացիք՝ որք սակաւ ամօք յառաջ ընկալեալ էին ’ի նմանէ ազատագիր վաճառականութեան յերկրի նորա, եւ զոր յետոյ եւս յամի 1215 վերստին հաստատեաց Լեւոն՝ առաւելագոյն եւս շնորհօք:

¹⁶⁴ Թուղթ Լեւոնի, առ Բայնալտեայ, յամն 1205. ԼԶ-Թ: